

# ՍԱՂՄՈՍ 108

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Փառաբանություն Աստծուն և խնդրանք հաղթանակ շնորհելու համար	Թշնամիների վրա Աստծո հաղթանակի վստահություն	Աղոթք ազգային թշնամիների դեմ հաղթանակի համար	Թշնամիների դեմ օգնության աղոթք	Առավոտյան երգ և ազգային աղոթք
<u>MT ներածություն</u> Դավթի Սաղմոսը				
108:1-6	108:1-4	108:1-4	108:1-4	108:1-2 108:3-4
	108:5-6	108:5-6	108:5-6	108:5 108:6
108:7-9	108:7-9	108:7-9	108:7-9	108:7 108:8 108:9
108:10-13	108:10-13	108:10-13	108:10-13	108:10-11 108:12-13

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՅԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

### ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սաղմոս 108:1-5 վերցված է Սաղմոս 57:7-11-ից:

Բ. Սաղմոս 108:6-13 վերցված է Սաղմոս 60:5-12-ից:

Գ. Բացատրական մանրամասների համար տես ամբողջական գրառումը առջանց Սաղմոս 57 և 60-ում:

**ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 108:1-6**

<sup>1</sup>Իմ սիրտը պատրաստ է, ո՛վ Աստված, սիրտս պատրաստ է.

Երգելու եմ ու փառաբանելու եմ իմ փառքով:

<sup>2</sup>Արթնացե՛ք, տավիղ ու քնար:

Ես ինքս վաղ եմ արթնանալու:

<sup>3</sup>Ժողովուրդների մեջ Քեզ եմ գովելու, ո՛վ ՏԵՐ,

Քեզ փառաբանություններ եմ երգելու ազգերի մեջ:

<sup>4</sup>Քանի որ Քո ողորմությունը մեծ է,

Երկինքներից վեր, ու Քո ճշմարտությունն

Ամպերին է հասնում:

<sup>5</sup>Մեծարվի՛ր, ո՛վ Աստված, երկինքներից բարձր,

Ու Քո փառքը թող ամբողջ երկրի վրա լինի,

<sup>6</sup>Որպեսզի նրանք, ում սիրում ես, ազատվեն .

Աջ ձեռքովդ փրկիր ու պատասխան տուր ինձ:

**108:1ա «պատրաստ»** Այս ԲԱՅԸ (BDB 465, KB 464, *Niphal* ԴԵՐԲԱՅ) մատնանշում է հավատքի և հավատարմության կյանք (տես՝ Սաղմ. 57:8 /երկու անգամ/, 112:7) Աստծո ճիշտ ճանապարհի մեջ (տես՝ Սաղմ. 16:11, 139:24): Մարդու անպատրաստ լինելու օրինակ տրված է Սաղմ. 78:37-ում:

LXX-ը, Փեշիտտան և Վուլգատտան կրկնում են այս արտահայտությունը, որը ցույց է տալիս, որ այս Սաղմոսի և Սաղմ. 57:7-11-ի միջև տեղի է ունեցել որոշակի միաձուլում:

«Սիրտ» խոսքի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏ:

❖ **«Ո՛վ Աստված»** Սա *Էլոհիմի* անունն է (տես՝ Ծննդ. 1:1) կիրառվում է Իսրայելի Աստծո համար որպես այս մոլորակի վրա բոլոր կյանք ունեցողների Արարչի, Մատակարարի և Պահապանի:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ.**

**108:1բ-3** Պատրաստ սիրտ ունեցողի առանձնահատկություններն են՝

1. Ես երգելու եմ – BDB 1010, KB 1479, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
2. Ես փառաբանելու եմ – BDB 274, KB 273, *Piel* ԸՂՁԱԿԱՆ
3. Ես վաղ եմ արթնանալու – BDB 734, KB 802, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ
4. Ես գովելու եմ – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
5. Փառաբանություններ եմ երգելու – նույնը ինչ #2

Այս գործողություններից շատերը կատարվում էին տաճարում երկրպագության ժամանակ, սակայն՝

1. «վաղ առավոտյանը» կարծես թե ենթադրում է ամենօրյա, անձնական երկրպագության օրակարգ
2. չնայած պետք է ընդունել, որ եբրայերեն այն կարող է նշանակել «Ես կարթնացնեմ արևածագին», նկատի ունենալով, որ նրա փառաբանությունները լույս և հույս կրերեն, առանց նշելու թե երբ է ինքը փառաբանում:
3. NET Աստվածաշունչը սա դիտարկում է որպես «փրկության և վրեժխնդրության ժամանակները, երբ սաղմոսերգուն կանխագրում է» նկարագրություն, էջ՝ 979:

**108:1բ**

**NASB**

**NKJV, Peshitta**

**NRSV, REB**

**TEV**

**NJB**

«անգամ իմ հոգով»

«անգամ իմ փառքով»

«արթնացիր իմ անձ»

«վեր կաց, հոգիս»

«եկ, իմ փառք»

**JPSOA  
LXX**

**«իմ ամբողջ հոգով»  
«իմ փառքի մեջ»**

NKJV բառացի է, սակայն NRSV, TEV և NJB կիրառում են Սաղմ. 57:8-ում դրա զուգահեռը, ավելացնելու «արթնացիր» (BDB 734, KB 802) ԲԱՅԻ երրորդ ձևը, որը MT-ում հանդիպում է երկու անգամ: Այստեղ, բառը (BDB 458) կիրառվում է սաղմոսերգուի էության համար (այսինքն՝ *nephesh*): «Փառք» տերմինի այս կիրառությունը հանդիպում է Սաղմ. 7:5, 16:9, 30:12, 57:8-ում:

NET Աստվածաշունչը (էջ՝ 979) առաջարկում է շտկում 777 (BDB 458) դեպի «իմ կյանք»՝ 777 (բառացի՝ «յարդ/ջիգյար», BDB 458): Սա մեջբերում է AB-ից՝ էջ 94, սակայն վերջինս կիրառում է մեջբերումը Անաթի կողմից, որը բացատրում է ԲԱՅԸ որպես «մեծարել»՝ կիրառված ՅԱՀՎԵԻ կողմից և ոչ թե որպես օժանդակություն կատարված շտկմանը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՓԱՌ-Բ (ՀԿ, kabod)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . NEPHESH

**108:3** Ուշադրություն դարձրեք, որ ՅԱՀՎԵԻ փառաբանությունը տարածվում է մինչև՝

1. ժողովուրդները
2. ազգերը
3. ամբողջ երկիրը (տես՝ Սաղմ. 108:5բ)

Տիեզերական տարը, որը մեծապես առանձնահատուկ էր նախորդ Սաղմոսներին, շարունակվում է: ՅԱՀՎԵՆ միակ ճշմարիտ Աստվածն է, միակ Արարիչը, և միակ Փրկիչը: Նա Ինքն է ստեղծել մարդկությանը Իր պատկերով և նմանությամբ (տես՝ Ծննդ. 1:26-27) հաղորդակցվելու համար (տես՝ Ծննդ. 3:8):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

**108:4**

<b>NASB</b>	<b>«բարեգթություն»</b>
<b>NKJV, LXX, Peshitta</b>	<b>«Ողորմություն»</b>
<b>NRSV</b>	<b>«հարատև սեր»</b>
<b>TEV</b>	<b>«ուխտի սեր»</b>
<b>NJB</b>	<b>«հավատարիմ սեր»</b>
<b>REB</b>	<b>«անմնացորդ սեր»</b>
<b>JPSOA</b>	<b>«հավատարմություն»</b>

Սա ուխտի հետ կապված հատուկ ԳՈՅԱԿԱՆ է (*hesed*), որը նկարագրում է ՅԱՀՎԵԻ հավատարմությունն Իր խոստումներին: Մարդկության վերջնական հույսը Աստծո ողորմած և հավատարիմ բնավորության վրա է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)

❖ **«Երկինքներից վեր»** Ուշադրություն դարձրեք հաջորդ երկու տողերի հետ զուգահեռությանը: ՅԱՀՎԵԻ բարեգթությունը՝ ողորմությունը և ճշմարտությունը հասնում է երկինքներից վեր: Այո՛, ՅԱՀՎԵՆ Ինքը գտնվում է ֆիզիկական ստեղծագործությունից վեր (Սաղմ. 108:5): «Երկինքները» երկրի վրա գտնվող մթնոլորտն է, ոչ թե ՅԱՀՎԵԻ բնակության վայրը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔԸ և ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔԸ

**108:5 «փառք»** Տես՝ Սաղմ. 108:1-ի գրառումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌՔ (ՀԿ, kabod)

**108:6 «ու՜մ սիրում ես»** Այստեղ, սա վերաբերում է ուխտի ժողովրդին (տես՝ Սաղմ. 60:5, 127:2, Երեմ. 11:15): Այն դարձել է Մեսիայի համար որպես անուն՝ տիտղոս (հատկապես Եսայի գրքում Ճառայի Երզնից, տես՝ Ես. 42:1): ՅԱՀՎԵՆ դիմում է Հիսուսին այս տիտղոսով՝

1. Նրա մկրտության ժամանակ՝ Սատթ. 3:17
2. Եսայի գրքից մի մեջբերման մեջ՝ Սատթ. 12:18
3. Նրա այլակերպության ժամանակ՝ Սատթ. 17:5

Հետագայում այն դարձավ ընտանեկան սիրո տիտղոս Հիսուսի հետևորդների համար (այսինքն՝ Հռոմ. 1:7, Կող. 3:12, 1 Թեսաղ. 1:4, 2 Թեսաղ. 2:13):

❖ Առաջին պարբերությունն ունի մի քանի ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ՝

1. արթնացի՛ր, տավիղ ու քնար, Սաղմ. 108:2 – BDB 734, KB 802, *Qal*
2. մեծարվի՛ր, ո՛վ Աստված, Սաղմ. 108:5 – BDB 926, KB 1202, *Qal*
3. փրկի՛ր, Սաղմ. 108:6 – BDB 446, KB 448, *Hiphil*
4. պատասխանի՛ր, Սաղմ. 108:6 – BDB 772, KB 851, *Qal*

Տարբերակ 3-ը և 4-ը աղոթքի խնդրանքներ են: Տարբերակ 1 և 2 կապված են փառաբանության հետ:

❖ «**Քո աջ ձեռքը**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒՆ ՆԿԱՐԱԳՐՈՂ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԼԵՉՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԵՌՔ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 108:7-9**

<sup>7</sup>Աստված Իր սրբությամբ խոսեց .

«Ես ուրախանալու եմ, Սյուրենը բաժանելու եմ

Ու չափելու եմ Սոկրովթի հովիտը:

<sup>8</sup>Իմն է Գաղաադն, ու Իմն է Մանասեն,

Եվ Եփրենը գլխիս զորությունն է:

Հուդան Իմ օրենսդիրն է:

<sup>9</sup>Մովաբն Իմ լվացվելու ամանն է:

Եդովմի վրա եմ զգելու Իմ կոշիկը .

Փղշտացիների դեմ հաղթական աղաղակ եմ բարձրացնելու»:

**108:7-9** ՅԱՀՎԵՆ խոսում է (մի քանի ԸՂԶԱԿԱՆՆԵՐ) Իր տանարից (բառացի՝ «սրբարանից»), որ Քանանը Իրենն է: Այս պարբերությունը Սաղմ. 60:6-8-ից է: Այս տողերից մի քանիսը դարձել են կարգախոսեր, բառակապակցություններ և պատարագային ասույթներ:

**108:7ա «Իր սրբությամբ»** Սա Սրբության Սրբոցի և Ուխտի Տապանակի նկարագրությունն է: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲԸ:

**108:7բ**

NASB	«ես հրճվելու եմ»
NKJV, Peshitta	«ես ցնձալու եմ»
NRSV	«մեծարանքով»
REB	«ես վեր եմ բարձրանալու հիմա»
TEV, NJB	«հաղթանակով»
LXX	«ես մեծարվելու եմ»
JPSOA	«հրճվանքով եմ . . .»

MT-ն «ցնծությամբ» (BDB 759, KB 831, *Qal* ԸՂԶԱԿԱՆ) հետևում է անգլերեն թարգմանություններից շատերին (մի փոքր տարբերությամբ): NEB և REB տարբեր կերպ են բաժանում երբայերեն տեքստը:

1. MT - ԴՆԵՃ
2. NEB - ԴՆ ԼԵՃ  
UBS Տեքստային Նախագիծը, էջ՝ 388, տալիս է երրորդ տարբերակը՝ շտկված
3. «Ես կմեծարվեմ» (LXX) - ԴՆԵՃ

**108:8 «Հուդան Իմ օրենսդիրն է»** Սա ակնարկն է Հակոբի իր զավակների օրհնությանը Ծննդոց 49-ում, հատկապես Ծննդ. 49:10: Սա նաև նշվում է Թվոց 24:17-ում (տես՝ Սաղմ. 60:7):

**108:9 «զցելու եմ Իմ կոշիկը»** Սա ծառայ, գերի կամ ռազմական հաղթանակ ունենալու նկարագրությունն է:

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 108:10-13**

<sup>10</sup>Ո՛վ է տանելու ինձ ամրակուռ քաղաքը,  
 Ո՛վ է առաջնորդելու ինձ մինչև Եդովմ:  
<sup>11</sup>Եթե ոչ Դու, ո՛վ Աստված, որ երես դարձրիր մեզնից,  
 Ու դուրս չելար մեր գորբերի հետ, ո՛վ Աստված:  
<sup>12</sup>Օգնի՛ր մեզ նեղության մեջ, քանի որ փուչ է մարդու օգնությունը:  
<sup>13</sup>Աստծով քաջություն ենք գործելու,  
 Քանի որ Նա է, որ ոտնակոխ է անելու մեր թշնամիներին:

**108:10-13** Քանի որ ՅԱՀՎԵՆ Խոստացյալ Երկրի տերն ու վերահսկողն է (այսինքն՝ Քանանի), միանշանակ Նա թույլ չի տա, որ Իր ժողովուրդը պարտվի և փոխարինվի: Բայց հիշեք Ծննդ. 15:12-21, Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-28:

**108:10ա «ամրակուռ քաղաք»** MT տալիս է «պարսպապատ քաղաք» (BDB 747 ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ BDB 131): Հնարավոր է սա նկատի ունի Բոսրա քաղաքը, քանի որ պոեմի հաջորդ տողում նշվում է Եդովմը: Բոսրան (BDB 131 II) երբայերեն «քաղաք» կամ «ամրոց» (BDB 131, տես՝ IVP *Աստվածաշնչի Հիմնավոր Մեկնություն*, էջ՝ 551) նույն արմատից է:

<b>108:10բ</b>	
NASB, NKJV, NRSV, TEV, Peshitta	«Ով ինձ կառաջնորդի»
REB, NJB, LXX	«Ով ինձ կուղորդի»
JPSOA	«որպեսզի ես առաջնորդվեմ»

Տեքստային հարցը նման է Սաղմ. 60:9-ին: Արդյո՞ք այս պոեմի առաջին տողի ժամանակը համընկնում է երկրորդ տողի ժամանակի հետ:

4. Աստված է առաջնորդելու
5. Աստված առաջնորդել է (UBS Տեքստային Նախագիծը գնահատում է “A”)

Հիշեք, որ ժամանակը երբայերեն ԲԱՅԵՐԻ մաս չի կազմում, միայն համատեքստն է որոշում ժամանակի գործոնը՝ ԲԱՅԻ արմատի օգնությամբ: Այստեղ, իրեն գուգահեռ Սաղմ. 60:9-ը պետք է հաշվի առնել:

**108:11** Ուխտի ժողովուրդը պարտվեց պատերազմում (տես՝ Սաղմ. 44:9), քանի որ Աստված նրանց հետ չէր: Տապանակը տարվել էր պատերազմի դաշտ որպես զինվորների հետ ՅԱՀՎԵԻ անձնական ներկայության խորհրդանիշ: Սակայն, եթե Նրա ժողովուրդը անհավատարիմ էր գտնվել ուխտի մեջ, Նա նրանց հաղթություն չէր տալու:

**108:12** Սա գիտակցում՝ ընդունում է այն բանի, որ Իսրայելի միակ հույսը ՅԱՀՎԵՆ է: Նրանց ռազմական գործունեքը և պատերազմական ռազմավարությունները չեն կարող հաղթանակներ ապահովել. միայն ՅԱՀՎԵՆ կարող է:

**108:13 «Նա է, որ ոտնակոխ է անելու»** Սա ռազմական հաղթանակի նկարագրություն է (տես՝ 2 Թագ. 22:43, Սաղմ. 44:5, Չաք. 10:5):

Հնարավոր է այն կապ ունենա՝

1. Թշնամու վզին կանգնելու հետ
2. մահացած զինվորների վրայով ցեխի և տիղմի մեջ քայլելու հետ
3. նահանջողներին հետապնդող հաղթող զորքի արագ շարժը

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Իրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ովքե՞ր են այս Սաղմոսում երկու խոսնակները:
2. Ուրիշ ո՞ր Սաղմոսներից է այս մեկը քաղված:
3. Ի՞նչ է փորձում փոխանցել մեզ Սաղմ. 108:7-9-ը:
4. Ի՞նչ կարևոր ճշմարտություններ են արտահայտված Սաղմ. 108:11-12-ում: